

ւանին եւ կ'ուզեն նոյնին մէջ մնալ, ինչ կերպով այստեղ ապրուստնին պիտի հոգան, ունին արուեստ կամ վաճառականութիւն եւ այլն:

1633 214.8 (17 Ապր.): Տեղեկութիւն կը տրուի Յովհ. Մոլինի Հայուն ձեռօք՝ թէ Յովհաննէս Պատրիարք ի Պոլիս շատ գրքերունի Պաղտասար Հայուն քով պահուած, նոյնպէս Լեհաստան Հայերու քով դրուած, պէտք է զասոնք Հռոմ փոխադրել տալ: Կ'որոշուի Պատրիարքին հետ խօսիլ, որպէս զի հրաման ընէ Պոլիս եւ Լեհաստան, եւ ինքն որուն ձեռօք որ պատշաճ կը տեսնէ, փոխադրել տայ:

1633 268.3 (19 Յուլ.): Նկատմամբ Պոլսոյ այն հայ ընտանիքներուն, որոնք կը բաղձան Հռոմ գալ եւ իրենց կաթողիկէ Յովհաննէս Պատրիարքին հետ Հռոմ բնակիլ եւ կաթողիկէաբար ապրիլ, կ'ըսուի՝ թէ յաջորդ Նստի մէջ խորհուի: Իսկ նոյն Պատրիարքին դաւանութեան եւ առ Ս. Բահանայապետն հնազանդութեան թուղթը վատիկանեան գրատուն եւ ի դիւան Castri Santi Angeli ղրկուի:

1633 287.6 (29 Օգ.): Կը ծանուցուի՝ թէ Պաղտասար, Կ. Պոլսոյ գաղղիական դեսպանատան հայ թարգմանը, կը յանձնարարէ Յովհաննէս Պատրիարքն, որ այժմ Հռոմ հաստատուած է, թէ անիկայ Հայոց նշանաւոր վարդապետներէն մէկն է:

1634 25.1 (13 Փետր.): Պոլսէն Հռոմ գալիք ընտանիքներու մասին որոշում չտրուած՝ քննուի Հայոց պատարագամատոյցը, որպէս զի